

ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՄԱՀՄՈՒԳ ՂԱԶՆԱՎԻՆ ՈՒՂՎԱԾ ԵՐԳԻԾԱՆՔԻ ՏԵՔՍՏԻ ՄԻ ԶԵՌԱԳԻՐ «ՇԱՀՆԱՄԵ»-ՈՒՄ (ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՐԱԲԱՏԱՌ ՖՈՆԳ, N 535)

Շահնամեագիտությանը հայտնի է, որ Շահնամեի բովանդակային-գաղափարական ազդեցությունը ստեղծված և դրա դիպաշարային համակարգի ու գեղարվեստական առանձնահատկությունների հետ ուղղակի առնչվող գրական ավանդույթը սկզբնավորվել է XII դարից և այնպիսի երկրորդական էպիկական պատումներ, ինչպիսիք են՝ Գարշասպ-նամեն, Ֆարամուրզ-նամեն, Բորզու-նամեն (կամ Սուսան-նամեն), Բանու-Գոշասպ-նամեն (*Ռոստամի դստեր մասին*), Շահրիար-նամեն (*Ռոստամի որդու մասին*), Բահման-նամեն, Դասթան-ե Զամշիդը ևլն, որոնցից մի քանիսն էլ ժամանակի ընթացքում հավելվել են էպոսի հիմնական տեքստին, դարձել դրա անքակտելի մասը: Ընդօրինակողների կողմից հավելագրումներ կատարելը էպոսին ավելի կատարյալ տեսք տալու նպատակ է հետապնդել: Դրանք պոեմում տեղ են գտել նաև հետագայում բանավոր ավանդույթի՝ շահնամեասացողների, նաղդալների ևլնի ձևավորման արդյունքում¹: XV-րդ դարից հետո ընդօրինակողները Շահնամեի ձեռագրերին սկսեցին հավելել նաև արձակ բնույթի առաջաբաններ, որոնք պատմում էին Ֆիրդուսու կյանքի պատմությունը, ժամանակակից գրչակիցների կողմից պոետի հետապնդումների ու պալատական խարդավանքների, Շահնամեն գրելու շարժառիթների ու ընթացքի, գրողի մահվան ու հողին հանձնելու հետ կապված իրադարձություններն ու միջադեպերը: Այս առաջաբանները շրջանառության մեջ դրեցին նաև դեռևս XII դարից վկայված Սուլթան Մահմուդին² ուղղված երգիծանքի տեքստը³, որը Ֆիրդուսին գրում է, երբ Սուլթա-

¹ Շահնամեի բանավոր ավանդույթի ձևավորման ու բանահյուսական արձագանքների ու դրանց փոխկապակցվածության մասին տե՛ս **Olga M. Davidson**, *Poet and Hero in the Persian Book of Kings*, Ithaca and London, 1994, pp. 54-72:

² Մանմուղ Ղազնավի (971-1030 թթ.) – Ղազնավիների դինաստիայի հիմնադիրն ու առաջին Սուլթանը Աֆղանստանում: Ծագումով թուրք, սակայն եռանդուն սուննի մուսուլման Սուլթանը Ղազնին դարձրեց պարսկա-մուսուլմանական ֆաղակրթության կենտրոն, իր իշխանությունը տարածելով Հյուսիսային Հնդկաստանից մինչև Արևմտյան Իրան, Ամուղառյաից դեպի հարավ՝ մինչև Մաֆրան: Սուլթան Մանմուղի և նրա ժամանակաշրջանի մասին տե՛ս **Clifford Edmund Bosworth**, *The Ghaznavids: Their Empire in Afghanistan and Eastern Iran, 994-1040*, 1963; **Muhammad Nazim**, *The Life and Times of Sultan Mahmud of Ghazna*, 1931, **Jan Rypka**, *History of Iranian Literature, The Ghaznavid Period*, Dordrecht-Holland, pp. 172-181 ևլն:

³ Երգիծանքի տեքստի ստեղծման պատմության մասին ամենահին վկայությունը ու դրանից ընդամենը 6 բեյթ պահպանել է Նեզամի Արուզիին՝ «*Āshār maqāle / Զորս թուղթ /*» աշխատությունում (XII դ.), տե՛ս **Dabir Siyāqī S. M.**, “Moqadamehā-ye Sāhnāme”,

նը հրաժարվում է վճարել խոստացված վճարը պոեմը գրելու դիմաց: Երեսունհինգ (ըստ որոշ տարբերակների՝ երեսուն, նաև՝ քսանհինգ) տարի աշխատելուց հետո Ֆիրդուսին Մահմուդ Ղազնավիին է ուղարկում 60000 բեյթից բաղկացած պոեմը և սպասում է խոստացված վարձատրությանը: 60000 ոսկու փոխարեն ստանալով 60000 արծաթ, պոետն իր դժգոհությունն է հայտնում Սուլթանին՝ երգիծանքի տողեր գրելով նրա հասցեին⁴: Երգիծական բովանդակությամբ հատվածներ ընդգրկված են «*Moqadame-ye haštsadsāle-ye Šāhnāme* /Շահնամեի Ութհարյուրամյա Առաջաբան/»-ում⁵, «*Moqadame-ye Avsat-e Šāhnāme* /Շահնամեի Միջանկյալ Առաջաբան/»-ում⁶: Ամենածավալուն տարբերակով երգիծանքի տեքստերը վկայված են «*Moqadame-ye Bāysonqorī* /Բայսոնդուրյան Առաջաբան/»-ում⁷: Ընդ որում, երգիծանքի տեքստերը Բայսոնդուրյան առաջաբաններ ունեցող տարբեր ձեռագրերում (որոնցից առաջինները տպագրվել են 1829 թ.-ին՝ Տ. Մեկենի (ձեռագիրը գրվել է 1425 թ.-ին, սակայն գիտնականը համադրել է Շահնամեի 17 ձեռագիր-օրինակ), այնուհետև՝ 1910 թ.-ին՝ Վալլենբուրգի (ձեռագիրը գրվել է 1434 թ.-ին) հրատարակություններով, ինչպես նաև՝ 1487 թ.-ին գրված ձեռագիրը հրատարակել է գերմանացի գիտնական Ջ. Ա. Վոլլերսը Բոննում՝ 1831 թ.-ին⁸, այնուհետև՝ լույս են տեսել Կալկաթայում, Թեհրանում՝ վիմագիր (1929 թ.), նաև՝ Բահադուրյան Շահնամեում (1906-1909թթ.)⁹ ևլն), տարբերվում են բեյթերի քանակով ու հաջորդականությամբ, բովանդակային երանգներով, երբեմն տարբեր ածականների, հատկացուցիչների ու բայերի գործածությամբ¹⁰:

Zendegīnāme-ye Ferdowsī wa sargozašt-e Šāhnāme, Tehran, 2004, pp. 209-213; **Shapur Shahbazi A.**, *Ferdowsī, A Critical Biography*, Harvard University, 1991, pp. 3, 97.

⁴ Շահնամեի ամենահին առաջաբանը, հայտնի «*Moqaddame-ye Šāhnāme-ye Abūmansūrī*» /Աբուամանսուրի Շահնամեի Առաջաբան/ անվամբ, պատկանում է Աբուամանսուր Մուհամմադ իբն՝ Աբդ ալ-Ռազզադի պատվերով Աբուամանսուր Մամադի կողմից գրված արձակ Շահնամեին (X դար): Արձակ այս Շահնամեի Ֆիրդուսու պոեմի աղբյուրներից մեկն է եղել, սակայն դրա առաջաբանը տարբերվում է իր բովանդակությամբ և մասնավորապես չունի Մահմուդ Ղազնավիին ուղղված երգիծանքի տեքստը:

⁵ Տե՛ս **Dabīr Siyāqī**, նշվ. աշխ., էջ 113, 141, նաև՝ **Riyāhī M.**, “Negāhī be moqadame-ye haštsadsāle-ye Šāhnāme az dastnevīs-e Flurens”, *Nāme-ye Bahārestān*, N 1-2, daftar-e 7-8, 2004, pp. 261-264:

⁶ Տե՛ս **Dabīr Siyāqī**, նշվ. աշխ., էջ 112, 136-137:

⁷ Բայսոնդուրյան Շահնամեի և դրա առաջաբանի մասին տե՛ս **Bayānī, X.**, “Šāhnāme-ye Bāysonqorī va Hāfez-e Abrū movarex-e darbār-e Tīmūrī”, *Barrasīhāye tārixī*, N 3, sāl-6, Tehran, pp. 159-178; **Lentz T., Khaleghi Motlagh Dj.**, “Bāysonqorī Šāhnāme”, *Elr*, vol. IV, Fasc. 1, 1990, pp. 9-11 ևլն:

⁸ Տե՛ս **Ա. Շահնազարյան**, «Շահ-նամե»-յի ձեռագրի մի օրինակը», *Ֆիրդուսի* (բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու), Եր., 1934, էջ 149-150:

⁹ Տե՛ս **Ulrich Marzolph**, *The Last Qajar Shahnama: The Shahnama-yi Bahanduri* (1319-26/1901-8), *Pembroke Papers* 5, 2006, p. 260:

¹⁰ Բայսոնդուրյան նախաբաններում վկայված երգիծանքի ֆնական տեքստը պատրաստել է Դաբիր Սիյազի, տե՛ս **Dabīr Siyāqī**, նշվ. աշխ., էջ 184-189:

Ֆիրդուսու կենսագրական անցքերը, Շահնամի գրման պատմությունը, ինչպես նաև՝ Սուլթան Մահմուդին ուղղված երգիծանքի տեքստը վկայել են նաև վարքագրական ու աղբյուրագիտական նշանակություն ունեցող երկերը: Մասնավորապես, XVI-XVII դդ. հեղինակ Ղազի Նուրոլլահ Շուշթարին իր «Majāles ol-momenin» գրքում գետեղել է մեկ այլ երգիծանքի տեքստ՝ Բայսոնդուրյան տարբերակից տարբերվող, որը քննության է ենթարկել Շիրանին իր «Dar šenāxt-e Ferdowsi /ձանաչեմֆ Ֆիրդուսուն/» գրքում¹¹: Ընդհանուր առմամբ, Շիրանին Սուլթան Մահմուդին ուղղված երգիծանքի ողջ տեքստը հաշվարկում է շուրջ 200 բեյթ, որոնք ի մի բերելով, հեղինակը քննարկում է դրանց շինծու և ոչ Ֆիրդուսու ձեռքով գրված լինելու խնդիրները: Շուշթարիի վկայած երգիծանքի տեքստն ունի 134 բեյթ, որոնցից, սակայն, հեղինակն իրական է համարում 69-ը¹²:

Երևանի Մ. Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում պահվող Ղաջարական շրջանում գրված Շահնամի ձեռագրի (արաբատառ ֆոնդ N 535, 386 թերթ) առաջին 7 թերթը կազմում է արձակ առաջաբանը՝ 2բ էջից մինչև 7ա էջը ներառյալ և նույնական է Բայսոնդուրյան առաջաբանին: Ձեռագրի վիճակը բավարար է, վերանորոգման հետքերը շատ չեն, սակայն թերթերի հաջորդականության խախտում է տեղի ունեցել առաջաբանում, որի արդյունքում 4-րդ թերթը հաջորդում 5-րդին, իսկ 5-րդին հաջորդող էջը ամրացված է 12-րդ էջի տեղում:

Ընդօրինակությունը գրված է նասխով, ենթավերնագրերը՝ շեքասթե նասթալիղով, օգտագործված է մուգ մանուշակագույն, իսկ ենթավերնագրերի համար՝ բաց կարմրագույն թանաք:

Պոեմի ողջը տեքստը ենթաբաժանված է ըստ իրադարձությունների, իսկ ավելի մեծ բաժինները սկսում են Āyāz-e dāstān «Պատմության սկիզբը» վերտառությունները: Ձեռագրում առկա է բովանդակային որոշ խտացումներ ու գունազարդումներ, մասնավորապես հագեցած են Սուլթան Մահմուդ Ղազնավիին ուղղված գովաբանության տեքստերը, որոնք երբեմն նաև կրկնություններ են:

Ընդհանուր առմամբ, սույն ընդօրինակությունը, որի բնագիրը, ըստ ամենայնի, XVI-XVII դդ. գործ պետք է լինի, նույնական է Ֆիրդուսուց ավանդված և հետագա հավելագրումներով լրացված տեքստերին և ներառում է էպիկական պատումների շարք՝ Գարշասպ-նամե, Բիժան-նամե, Բորզու-նամե ևն:

Ձեռագիրը առանձնանում է նաև բարձրարվեստ ու ինքնատիպ մանրանկարներով և զարդանախշերով: Մանրանկարները 56-ն են, որոնք տեղա-

¹¹ Širānī M. H., “Dar šenāxt-e Ferdowsi” (tr. by Š. Čūhdarī), Tehran, 1949, pp. 101-160.

¹² Širānī, նշվ. աշխ., էջ 120: Գաբիր Սիյադին ևս իր վերոնշյալ աշխատությունում ներկայացրել է Շուշթարիի հիշատակությունը Ֆիրդուսու ու իր պոեմի մասին, ներառյալ երգիծանքի տեքստը՝ բաղկացած հենց 69 բեյթից, որոնք Շուշթարին ևս իրական բեյթերն է համարում, տե՛ս Dabir Siyāqī, նշվ. աշխ., էջ 261-291:

դրված են համապատասխանաբար ուղղակիորեն կապ ունեցող դրվագներին զուգընթաց: 2բ, 7բ և 206բ էջերն ունեն մանրանկար ծաղիկներով խորանագարդեր: 2բ էջից սկսվում է առաջաբանը, 7բ էջից՝ պոեմի բուն տեքստը, իսկ 206բ էջից սկսվում է էպոսի դյուցազնական մասը նշանավորող Լոհրասպի իշխանության պատմությունը:

Ձեռագիրն ունի հիշատակարան՝ հետևյալ բովանդակությամբ. «օգնությամբ պարզևատու թագավորին ամեն մասով վերջացավ պերճաբան ու արժանավայել «Շահ-նամե» գիրքը ի վայելումն իմաստագույն շեյխ Աբուլ Ղասիմ Թուախի, Ֆիրդուսի մականվամբ, տերն ողորմի, զիլհաջ ամվալ Յ-ին չորեքշաբթի օրը 1245 թ. (1830 թ.), ըստ հրամանի մեծապատիվ, վսեմագույն, փառագահ, երջանկության ուղեկից, կորովի, արթնությամբ շրջահայաց, հեևարան մեծամեծների Մոհամմադ Քարիմ Խանի Բիդշահրիի¹³, նվաստ ծառա գրիչ Մոհամմադ Հոսեյն Իբն Ալի Մոհամմադ Խան Աղավալիի կողմից» (էջ 384բ)¹⁴:

Առաջաբանի 4բ էջում զետեղված է Սուլթան Մահմուդին ուղղված երգիծանքի տեքստը: Էջն առնված է 7 սև և մեկական կարմիր, կապույտ, ոսկյա շրջանակների մեջ: Երգիծանքի տեքստը բաղկացած է 38 բեյթից¹⁵, գրված չորս սյունով, որից 4 բեյթը լուսանցքում շրջանաձև:

¹³ Մոհամմադ Քարիմ Խան Բիդշահրին իշխել է Բիդշահրում (հաղափ Իրանի Ֆարս նահանգի հարավ-արևմտյան հատվածում): Եղել է տեղի ազդեցիկ խաներից, որի հրամանով էլ գրվել է այս ձեռագիրը: Մաշտոցի անվան Մատենադարանում ձեռագրի հանգրվանման պատմությունը սկսվել է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ձեռագրերի հավաքման ու կենտրոնացման գործընթացի շրջանակներում, որն իրականացրել է 1922 թ. Երևանում հիմնավորված կոլտուր-պատմական թանգարանը: 1922-1938 թթ. ընթացքում այստեղ հանգրվանած 1298 ձեռագրերի մեջ էր նաև N 535 Ֆիրդուսու Շահնամե պոեմի ձեռագիրը, որը 1935 թ. հանձնվեց կոլտուր-պատմական թանգարանի բազայի վրա ստեղծված կերպարվեստի թանգարանին, որպես մանրանկարչական արժեք ունեցող կարևոր ձեռագիր: Կերպարվեստի թանգարանում գտնվող 75 ձեռագրերը աստիճանաբար են հանձնվել Մատենադարանին՝ 1941, 1945, 1949, 1952, 1954 թթ., սակայն 1938 թ.-ից համարվել են Մատենադարանի սեփականությունը (տե՛ս *Յուզակ Ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի*, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, հ. Ա., Եր., 1965 թ., էջ 151-2, 164-5, 190): Սակայն, հաշվի առնելով, որ N 535 ձեռագիրը N 1850 և N 1267 համարների տակ ցուցակագրված է նաև Մատենադարանի N 17 և N 72ա Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդում, որոնք կազմվել են 1940 թ., ապա ենթադրվում է, որ այս ձեռագիրը Մատենադարանին է հանձնվել ավելի շուտ, ըստ *Յուզակ Ձեռագրաց-ի* հենց 1938 թ.: Մատենադարանը, որ գործում էր էջմիածնում, 1939 թ. սեպտեմբերի 1-ին տեղափոխվեց Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի նորակառույց շենք՝ զբաղեցնելով 2-րդ հարկարժևի մի մասը և 3-րդ հարկարժևին: Մատենադարանի այսօրվա շենքում N 535 ձեռագիրը պահ է տրվել 1959 թ.-ից և այստեղ է գտնվում մինչ այժմ:

¹⁴ Այս ձեռագրի առաջին նկարագրությունը պատկանում է Ա. Շահնագարյանին: Նա ձեռագրի մասնակի համեմատություն է կատարել Ջ. Ա. Վոլլերսի հրատարակության (1877-1883 թթ.) հետ, տե՛ս Ա. Շահնագարյան, *նշվ. աշխ.*, էջ 148-155:

¹⁵ Սուլթան Մահմուդին ուղղված 38 բեյթանոց մի երգիծանքի տեքստ է հիշատակում նաև Շիրանին, ըստ որի, այն վկայվել XVII դ.-ի Շահնամեի մի ձեռագրի մեջ: Ցավոք, հետի-նակը այլ տվյալներ այդ ձեռագրից չի բերել, որպեսզի կարողանայինք այն համեմատական նյութ ծառայեցնել այս տեքստի համար, տե՛ս Տիրանի, *նշվ. աշխ.*, էջ 120:

Սուլթան Մահմուդին ուղղված երգիծանքի բեյթերը հաջորդում են հայտնի այն դրվագին, երբ Այազը,¹⁶ Ֆիրդուսու հրահանգով, Սուլթանին է հասցնում գրվածքը, որի կնիքը բացելով՝ Մահմուդը կարդում է հետևյալ տողերը¹⁷.

1 الا خردمند صاحب هنر

بکفتار و کردار من در نکر

Alā¹⁸ xeradmand-e sāheb-honar

Begoftār o kerdār-e man dar negar.

Քարզմ.՝ Ուլ իմաստուն, հունարի տեր,

Իմ խոսքին ու գործին մտիկ տուր¹⁹:

Այս բեյթում կա հանգի խախտում, և հնարավոր ճիշտ տարբերակը պահանջում է ey ձայնարկության առկայություն²⁰:

2 میانجی میان من و شاه باش

بحق خدا کز حق آگاه باش

Miyānjī miyān-e man o šāh bāš

Behaqq-e xodā kaz haqq āgāh²¹ bāš.

¹⁶ Այազը Սուլթան Մահմուդի հավատարիմ ու սիրելի ծառաներից էր, որը մեծ ծառայություններ է մատուցել Ֆիրդուսու հետ նրա հարաբերություններում, մանրամասն տե՛ս **Matīnī J.**, “Ayāz, Abu ‘l-Najm”, *EI*, Vol. III, Fasc. 2, pp. 133-134 կմ:

¹⁷ N 535 ձեռագրում վկայված և ֆննարկվող երգիծանքի այս տեխտում երբեմն խախտված է հանգը, իսկ տարբերակները բերվել են Գաբիր Սիյադիի ֆննած Բայսունդուրյան նախաբանների երգիծանքի տեխտերի (**Dabīr Siyāqī**, *նշվ. աշխ.*, էջ 184-187; 187, n. 1, այսուհետ՝ D) համեմատությամբ: Քննարկվող ձեռագրի տեխտը, ինչպես կտեսնենք, բավական տարբերություններ է ցուցաբերում Բայսունդուրյան նշված առաջաբանների հետ, ուստի տարբերակների ու համեմատությունների համար օգտագործվել են նաև Շուրբարիի (**Širānī**, *նշվ. աշխ.*, այսուհետ՝ Š) և նաև՝ Քեհրանի համալսարանի Կենտրոնական գրադարանում պահվող XVII դարի ձեռագրի տեխտերը (N 2591, այսուհետ՝ M): Վերջին ձեռագրում երգիծանքի տեխտը զետեղված է 644-րդ էջում, բաղկացած է 141 բեյթից և ներառում է բոլոր այն բեյթերը, որոնք վկայված են ֆննարկվող մեր ձեռագրում, տե՛ս “Masnavi-ye man: kalām-e hakim Ferdowsi dar hajv-e Soltān Mahmud / *Իմ մասնավին. Հաբիմ Ֆիրդուսու երգիծանքի խոսքերը Սուլթան Մահմուդի մասին*” վերտառությամբ (տե՛ս **Deraxšān Mahdi**, “Aš‘ārī tāze az Ferdowsi? Dar hajv-e Soltān Mahmud: āyā aš‘ār-e hajvnāme az Ferdowsi ast?”, *Majmu ‘a-ye soxanrānih-ye haftomin kongre-ye Irāni*, j. 1, Tehran, 1976, pp. 270-283): Համընկնումներ կան Քեհրանի Գոլեստան պալատի Բայսունդուրյան Շահնամեի ձեռագրի հետ (այսուհետ՝ G4752, էջ 18-19), <http://www.wdl.org>:

¹⁸ Š - ey, իմաստային առումով որևէ տարբերություն չկա:

¹⁹ Հայերեն քարզմանությունները տողացի են՝ բնագրին մոտ: Նշենք, որ երգիծանքի որոշ բեյթերի հայերեն զեղարվեստական քարզմանություններ կատարել են **Գ. Ասատուրը** 1935 թ.-ին, եր., իմբ.՝ *Ե. Չարենցի*, էջ 118-125; **Սեյադիին** 1884-ին (202 տող)՝ *Երկասիրուծին Սեյադի կապիտան Պետրոս Բեգի Մագաթեանց*, Բագու, Գ մաս, էջ 31; **Ս. Տարնացին** (218 տող) «Օտար սուլթան Մահմուդի մասին», *Խ. Հայաստան*, 1934, N 141, տես նաև՝ **Լեվոնյան, Գ.**, «Ֆիրդուսին հայ գրականության մեջ», *Ֆիրդուսի* (բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու), եր., 1934, էջ 135-136:

²⁰ Հմմտ. M : *alā ey xeradmand-e...*:

Թարգմ.՝ Իմ ու շահի միջև միջնորդ եղիր,
Աստծո նշմարտությամբ նշմարիտ եղիր:

3 مران نظم شهنامه فرمود شاه
در انگاه که بنشست خندان بگاه

Mar ān²² nazm-e šahnāme farmūd šāh
Dar āngah²³ ke benšast xandān²⁴ be gāh.

Թարգմ.՝ Հրամայեց շահը այն շահնաման գրել,
Հենց այն պահին, երբ ուրախ գահին նստեց:

4 که بخشد بهر بیت زر یکدرم
هر آنچه اورم نظم از بیش و کم

Ke baxšad be har beyt zar yek deram
Har ānče²⁵ āvaram nazm az bīš o kam.

Թարգմ.՝ Որ նվիրի յուրաքանչյուր բեյթի համար մեկ ոսկեդրամ,
Որքան էլ որ կերտեմ՝ շատ, թե՛ քիչ:

5 بسی سال و پنج از سرای سپنج
چنین رنج بردم بامید گنج

Be sī sāl o panč²⁶ az²⁷ sarāy-e sepanj
Čenīn ranj bordam be ommīd-e ganj.

Թարգմ.՝ Երեսուն հինգ տարի այս աշխարհում,
Այսօր տանջվեցի գանձի ակնկալիքով:

6 بشش بیور این نامه و شش هزار
بگفتم نکرد آنچه در من نظار

Be šeš bīvar²⁸ īn nāme o šeš hezār²⁹
Begoftam nakard ānče³⁰ dar man nazār.

Թարգմ.՝ Վաթսուն վեց հազար (տող ունեցող) այս գիրքը,
Կազմեցի, բայց չարժանացրեց նա մի հայացքի:

²¹ Ձեռագրում բառասկզբի բոլոր երկար ā- հնչյունները գրված են առանց երկարության նշանի, սակայն մենք տալիս ենք դրանց երկար հնչյունադարձությունը՝ ā-:

²² Š; M : marā «իմն»: Ձեռագրի *mar ān* ձևի *mar* ձևույթը հայցական հոլովին բնորոշ նախադաս ցուցիչ է և տողը բովանդակությամբ էական փոփոխության չի ենթարկվում:

²³ Š : *dam* «պահ»:

²⁴ M: *šādān* «ուրախ»:

²⁵ M: *ānč* - ավելի ճիշտ է հանգի տեսանկյունից:

²⁶ G4752 -ում վկայված է 30 տարի *Be sī sāl andar sarāy-e sepanj* «Երեսուն տարի այս աշխարհում...», տե՛ս էջ 18:

²⁷ D : *andar* «մեջ», տե՛ս **Dabīr Siyāqī**, *Իշվ. աշխ.*, էջ 188, n.1, 15; նաև՝ **Širānī**, *Իշվ. աշխ.*, էջ 156:

²⁸ Հմմտ.՝ հյ. բիբլ < իր.:

²⁹ M: *šāhvār* «արքայավարի, արքայական»: Այս տարբերակը ավելի ճիշտ է իմաստային տեսանկյունից և տողը թարգմանվում է «վեց բյուր այս գիրքը արքայական»:

³⁰ Š; M : *īč* «ոչինչ»:

7 نکر د اندرین داستانم نگاه
 بگفتار بدگوی گم کرده راه

Nakard andarīn dāstānam³¹ negāh
 Be goftār-e badgūy gom karde rāh

Թարգմ.՝ Մի հայացք չզգեց պատմությանս,
 Չարախոսի խոսքով կորցրեց (նիշտ) ճանապարհը:

8 حسد برد بدگوی در کار من
 تبه کرد ازو شاه بازار من

Hasad bord badgūy dar kār-e man
 Tabāh kard az ū³² šāh bāzār-e man.
 Նախանձեց շարախոսը իմ գործին,
 Շահն իմ հաշիվը դրանից փչացրեց:

9 سخنهای شایسته ابدار
 بگفتار بدگوی بگذشت خوار

Soxānhā-ye šāyesta-ye ābdār
 Be goftār-e badgūy bogzašt³³ x^wār.

Թարգմ. Արժանի ու փառապանձ ֆերվածներն (իմ),
 Չարախոսի խոսքով ստորացվեցին:³⁴

Այս բեյթում նկատելի է Ֆիրդուսուն հատուկ բանաստեղծական հնարքների գործածումը՝ հոմանիշ *soxān* և *goftār* «խոսք» միավորների օգտագործումը՝ հակառակ լիցքային բովանդակություն ապահովելու համար, առաջինը՝ դրական, երկրորդը՝ բացասական:

10 بد اندیش را روی نیکی مباد
 سخنهای نیکم به بد کرد یاد

Bad-andīš rā³⁵ rūye³⁶ nīkī mabād
 Soxanhā-ye nīkam³⁷ be bad kard yād³⁸.

Չարակամը բարու երես թող չտեսնի,
 Որ լավ խոսքերս չարով հիշեց:

11 بر پادشه صورتم زشت کرد
 فروزنده اخگر چو انگشت کرد

Bar-e padešah sūratam³⁹ zešt kard

³¹ M: *dāstānhā* «պատմություններ»:

³² Š: *šod bar* «եղավ»; M: *bar* «վրա»:

³³ M: *bogzāšt* «դրեց»:

³⁴ G4752, էջ 19, տես նաև՝ *Širānī*, նշվ. աշխ., էջ 122, 123, 125: M535, էջ 370ա վկայված է միայն առաջին տողը և *ābdār* «փառապանձ»-ի փոխարեն՝ *γamgosār* «վշտալի», տե՛ս n. 27:

³⁵ Š; D: *kaš* = *ke* «որ» + *-aš* երրորդ դեմքի եզակի թվի կցական դերանուն:

³⁶ M; D: *ruz* «օր»:

³⁷ D: *nīkū* «բարի»:

³⁸ Բեյթի առաջին տողը բովանդակությամբ մոտ է Սասաղի հետևյալ տողին՝ *ke bad mard rā rūye nīkī mabād* «չար մարդը լավի երես թող չտեսնի» (տե՛ս *Širānī*, նշվ. աշխ., էջ 143):

³⁹ Š; D: *peykaram* – «մարմինս»:

Forūzande-ye axgar čū angešt kard.

Արֆայի մոտ երեսս սևացրեց,
Շիկացած կայծը մոխիր դարձրեց:

12 Կո Բր Բա Դա Դա Դա Դա Դա Դա
ՆԻ Դա Դա Դա Դա Դա Դա Դա Դա

Čū bar bād dādand ranj-e marā

Nabod hāselī sī o panč-e marā.

Քանզի Բամուն տվեցին իմ տանջանքները,
Անարդյունիք եղավ իմ երեսուն հինգ [տարին]⁴⁰:

13 Կր Դա Դա Դա Դա Դա Դա Դա Դա
ՆԿ Դա Դա Դա Դա Դա Դա Դա Դա

Har ankas ke š'er-e⁴¹ marā kard past

Nagīradaš gardūn(-e?) gardande dast.

Ով իմ բանաստեղծության արժեքն իջեցրեց,
Աստված նրան երբեք ձեռք չի մեկնի:

14 Կո Եր Եր Եր Եր Եր Եր Եր Եր
Դա Դա Դա Դա Դա Դա Դա Դա

Čō 'omram be nazdīk-e haštād šod

Omīdam be-yekbāre bar bād šod.

Երբ ութսուն տարիս բոլորեց,
Հոյսս մեկեն ի դերև ելավ⁴²:

15 Կն Կն Կն Կն Կն Կն Կն Կն
Դա Դա Դա Դա Դա Դա Դա Դա

Čenīn šahryārī o baxšande⁴³

Begītī ze šāhān deraxšande.⁴⁴

Այսպես արքան ես դու առատաձեռն,
Բոլոր շահերից առավել պայծառն աշխարհում⁴⁵:

16 ԲԴ ԲԴ ԲԴ ԲԴ ԲԴ ԲԴ ԲԴ ԲԴ
Դա Դա Դա Դա Դա Դա Դա Դա

Bedīngūna bogzašt az qol-e xod

Bar āvard bar⁴⁶ qol-e xod bül-e xod.

⁴⁰ Širānī, նշվ. աշխ., էջ 122, 125, 157:

⁴¹ G4752: šā'er = «բանաստեղծ»:

⁴² St'u Širānī, նշվ. աշխ., էջ 140:

⁴³ M; Š: baxšandē - ī անորոշության հոդով:

⁴⁴ M; Š: deraxšandē - ī անորոշության հոդով:

⁴⁵ St'u Շահնամե, Մոսկվայի հրատարակություն, 1998, հ. 9, էջ 1802: 3373; M 535,

էջ 370ա, տե՛ս Širānī, op. cit., p. 122, 125:

⁴⁶ M: az - «ից» բացառական հոլովի իմաստն արտահայտող նախդիր:

Այսպես իր խոսքը դրժեց,
Միզեց իր խոստումի վրա⁴⁷:

17 نه ممسك بد ين پادشاه و نه زفت
که از روی کم این سخنها شنفت

Na mamsak bod īn pādšāh o na zoft
Ke az rūy-e kam⁴⁸ īn soxanhā šenoft⁴⁹.

Ոչ գծուծ էր արքան և ոչ՝ մանրախնդիր,
Որ ամոթխածությունից այս խոսքերը լսեց:

18 چو قول شه از جود بنوشت یخ
حدیث فقع بر نوشتم ز نج (خ؟)

Čō qol šah az jūd benevešt yax⁵⁰
Hadīs-e foqa ‘bar⁵¹ neveštām ze naj(x)⁵².

Քանզի շահի խոսքը (որպես) ընծա ստոնյցին գրվեց,
Գինու հատիսն էլ (կոտակված խոսքը) գիր դարձավ⁵³:

⁴⁷ Širānī, նշվ. աշխ., էջ 122, 125: Ինչպես իրավացիորեն նշում է նաև Շիրանին, այս բեյթում բանոգտագործման միավորները չեն համապատասխանում Ֆիրդուսու ոճին. «*bogzašt az qol-e xod*», «*bar qol-e xod bül-e xod*» խոսակցական ոճի բանակապակցություններ են և Ֆիրդուսու բանոգտագործման դրոսից չեն:

⁴⁸ Š: az vey kamī «նրանից էի»: Այս դեպքում, կարծում ենք M 535 –ի «*rūy-e kam*» ձևը ավելի նիշտ է «ամոթխածություն» նշանակությամբ:

⁴⁹ M: ke az vey konam soxanhā šegeft: «որ նրա այս խոսքերը զարմացրեցին ?»: Այս տարբերակը ավելի անհասկանալի է:

⁵⁰ Š: nax «թեղ», D; M: bax:

⁵¹ Š: rā:

⁵² Š; M: be yax «ստոնյցին»:

⁵³ Այս բեյթը առանձնանում է բանոգտագործմամբ և տարընթերցումների առկայությամբ: Տարընթերցումների հիման վրա թերևս առավել հարմար վերականգնելին հետևյալ տարբերակն է՝ «*Čō bā man na az jūd benevešt bax, hadis-e foqa ‘bar neveštām be yax*» «Քանզի ընծան չէր նրա հիացմունքը (*bax* – հիացմունք արտահայտող ձայնարկություն, հմմտ. *bah-bah*)», խոսք (այդ պատճառով) ստոնյցին գրեցի (այսինքն՝ նրանից շնորհակալ չեղա): Բանոգտագործման տեսակետից հետաքրքիր է հազվադեպ հանդիպող արաբերեն *jūd* միավորը՝ «ընծա» նշանակությամբ, մյուս՝ *hadis-e foqa*՝ բանակապակցությունը և դրա *foqa*՝ միավորը ֆինանսականության արժանացել է թե իմաստի և գրականության մեջ խորհրդաբանության տեսանկյուններից: *Foqa*՝-ն խմիչֆ է, որը պատրաստվել է կամ գարուց, կամ, ցորենից, կամ շամիչից (տե՛ս *Loyatnāme-ye Dehxodā*, համապատասխան բանահոդվածը) և նման է եղել է գարեջրի կամ գինու: Մի դեպքում այն համարվում է պլոնիոլային, մեկ այլ դեպքում՝ միայն գովացուցիչ ըմպելիք, որը պահվել է հատուկ կարասներում և, ամենայն հավանականությամբ, գազ է պարունակել: Հետագայում *foqa gošāyi* բոց. «գինի, կամ գարեջրի բացում» արտահայտությունը մտել է պարսից գրականության խորհրդաբանության մեջ՝ «խոսել, ստեղծագործել, առեղծվածային բացահայտել, պոռկակ» իմաստներով (տե՛ս *Pūrjavādi N.*, «*Foqa ‘gošūdan*»-e Ferdowsi va sepas ‘Attār», *Pažūhešgāh-e ‘olum-e ensāni va motāle‘āt-e farhangi*, 1-N 45, 2-N 46, Tehran, 1988, pp. 158-173): Ինչ վերաբերում է *foqa*՝ «գինի» միավորին, տե՛ս նաև՝ հաջորդ՝ 19-րդ բեյթը, այն իրանական *fōgān* «գինի» միավորի արաբականացված տարբերակն է և ծագում է ըստ ամենայնի, հին իր. *pāw- > *pāvaka-, մ. պ., ժ. պ. *pāk* «մաքուր», նախաձևից (P.

19 فقاعی چو ارزیدم از گنج شاه
از ان من فقاعی خریدم براه

Foqā ʾī čō arzīdam⁵⁴ az ganj-e šāh
Az ān man foqā ʾī xarīdam be rāh.
Շահի գանձարանից ֆանգի գինու շափ գնահատվեցի,
Դրանով էլ միայն հանապարհին գինի գնեցի:

20 چو گفتار شه می کشدار بسیم
نباشد همی نام خ یر لئیم

Čō goftār-e šah mīkešdār⁵⁵ be sīm
Nabāšad hamī nām-e xeyr⁵⁶ laim.
Քանգի շահն իր խոսքով ոսկին դարձնում է արծաթ,
Բարի (Նրա) անունն էլ ոչ այլ ինչ է, քան՝ ազան:

21 نژادش چو از بیخ شاهی نرست
بگفتار از ینسان بود نادرست

Nežādaš čō az bīx-e šāhī narost
Begoftār az īnsān bovad nādorost:
Քանի որ նրա ծագումը արքայական չէր,
Դրա մասին խոսելն էլ նիշտ չէ:

22 چو دیهم دارش نبد در نژاد
زدیهم داران نیلورد یاد

Čō deyhāmdāraš⁵⁷ nabod dar nežād
Ze deyhāmdārān nayāvard yād.
Քանի որ թագակիր չի եղել նրա տոհմում,
Թագակիրներին չհիշեց նա (բնավ)⁵⁸:

Horn, *Grundriss der neupersischen Etymologie*, Strassburg, 1893, p. 62.), և նույն նախաձևից՝ *pawākāna- > *pōkān > fōgān հնարավոր հնչյունական և «մաֆուր» → «գոված» → «գինի» իմաստային զարգացմամբ: Վ. Աբաևը պրակ. pāk «մաֆուր» բառույթի հետ է կապում նաև օսեթեն fagæ «մաֆոված (կորեկ)» միավորը, տե՛ս В. И. Абаев, *Историко-этимологический словарь осетинского языка*, т. 1, М.-Л., 1958, с. 416:

⁵⁴ G4752; Š: bīrīdam, D: nayīrīdam «զգնահատվեցի»: D տարբերակի առաջին տողը՝ Foqā ʾī čō nayīrīdam ganj-e šāh կրթագմանվի «գինու շափ էլ չգնահատվեցի շահի գանձարանից»:

⁵⁵ Š; M: mikonad zar «դարձնում է ոսկին»: M 535 ձեռագրում գրված mīkešdār ձևն անհասկանալի է և նախընտրելի է բերված օրինակների տարբերակը:

⁵⁶ Š; M: ū joz «նրա բացի»: Ձեռագրում բերված տարբերակը նիշտ չէ նաև հանգի տեսանկյունից:

⁵⁷ M: deyhīmdāraš «թագակիր»:

⁵⁸ Այս բեյթը բովանդակությամբ համընկնում է Նեգամի Արուզի վկայած 6 բեյթանոց ծաղրի վերջին բեյթի հետ, որտեղ կարդում ենք՝ čō andar tabāraš bozorgī nabūd,

23 اگر منصفی بردی از راستان
که اندیشه کردی در ین داستان

Agar monsefi bordi az rastan
Ke andise kardī dar īn dāstān.

Եթե արդարամիտ ես, նշարիտ (մարդկանց) հասկացել ես⁵⁹,
Որ խորհել ես այս պատմության մասին:

24 بیگفتی که من در نهاد سخن
بدادستم از طبع داد سخن

Begofti ke man dar nahād-e soxan
Bedādam az tab 'e dād-e soxan

Ասացիր, որ ես խոսքիս էությունը
Դատեցի խոսքիս արդարության դատով:

25 جهان کرده ام از سخن چون بهشت
از این بیش تخم سخن کس نکشت

Jahān karde am az soxan čōn behešt
Az īn biš⁶⁰ toxm-e soxan kas nakešt.

Աշխարհը դարձրել եմ իմ խոսքով մի դրախտ,
Մրանից ավել ոչ ոք խոսքի սերմերը չի ցանել:

26 که نزد خداوند جان افرین
بسی می برم زینجهان افرین

Ke nazd-e xodāvand-e jān āfarīn
Basī mībaram zīn jahān āfarīn.

Ամենազոր Աստծոն՝ կյանքի արարչին,
Անչափ փառաբանում եմ այս աշխարհում:

27 شفيع محمد رفيعم عليست
امامم وصي و وليم نبي است

Šafi 'am Mohammad rafi 'am⁶¹ 'Alīst
Emāmam vasi⁶² o valīam nabī⁶³ ast.

Nayārast nām bozorgān šonūd «Քանզի իր տոհմը ազնվական չէր, չկարողացավ մեծերի /ազնվականների/ անունը լսել», տե՛ս Dabīr Sīyāqī, *հշվ. աշխ.*, էջ 212:

⁵⁹ Բառացի՝ «ովել ես խրատ»:

⁶⁰ M: *pīš* «առաջ» և, ըստ ամենայնի, այս տարբերակը ավելի հիշտ է նախ իմաստային առումով, այսինքն՝ «Մրանից առաջ ոչ ոք խոսքի սերմերը չի ցանել» և նաև՝ ընդհանրապես ձեռագրերում մեծամասնաբար p ք և b Բ տառերի տարբերակումը հիմնականում չի պահպանվում:

⁶¹ Š; M: *rafīq*: «ընկեր», որն ավելի հիշտ է:

⁶² Š: 'Alī.

⁶³ M: *vasī*.

Մարգարես Մուհամմադն է, բարձրագույնս՝ Ալին,
Իմանս՝ Ալին է և սուրբս՝ Մարգարեն:

28 اگر دوست داری تو ال رسول
سخن افتدت در محل قبول.

Agar dūst dārī to āl-e-rasūl
Soxan oftadat dar mahal-e qabūl.
Եթե սիրում ես Մարգարեի ցեղին,
Ապա խոսքդ ընդունելի կլինի:

29 تورا بس بود گفتنم یاد گیر
بدار البقا دایم اباد گیر

To rā bas bovad goftanam yād gīr
Be dār-ol-qabā dāyem⁶⁴ ābād gīr.
Քեզ բավական է ասածս, սովորի՛ր,
Դրախոսն էլ մշտապես շեն պահիր:

30 مران از دلت مهر ال نبی
مکن خویشتن را ازو اجنبی

Marān az delat mehr-e al nabī
Makon xīštan rā azū ajnabī.
Մի վանիր սրտիցդ Մարգարեի սերը,
Մի օտարի եզ նրանից:

31 خدایا تو این بنده را دست گیر
ببخشای تقصیر این مرد پیر

Xodāyā to īn bande rā dast gīr
Bebaxšāy taqsīr-e īn mard-e pīr.
Ով Աստված, դու այս ծառայիդ օգնիր,
Ներիր այս ծեւ մարդու մեղքերը:

32 نخواهیم دنیاى مردم گزای
تن اباد دارم بدیگر سرای

Naxāhīm donyā-ye mardom-gozāy⁶⁵

⁶⁴ Š; M: *jāyam*: «տեղս», որն իմաստային ավելի հարմար տարբերակ է:

⁶⁵ Այս բառամիավորը երգիծանքի տեխնիկայի բառօգտագործման այն եզակի ձևերից է, որը կարելի է վերագրել Ֆիրդոսուն: Կազմված է *mardom* «մարդիկ» և *gozāy*- < *gozāyīdan* «վնասել, պակասեցնել» բայի ներկայի հիմքի ձևերից, հմմտ. *gozāyīš* «վնասում, պակասեցում», *gozāyanda* «վնասող, պակասեցնող»: Այս միավորը «պակասեցնող, իջեցնող» իմաստով որպես բառախաղ գրականության մեջ գործածել է *فزایش (a) fzāiš* «ավելացում» ձևին հականիշ, այսպես՝ Ֆիրդոսին գրում է. *Guzāyanda har ke jūyad badī, fazāyanda farre-ye īzādī* «(եթե) պակասեցնողը փնտրում է վատը, ավելացնողը՝ Աստվածային փառքը»: Քննարկվող բառամիավորի ընտրությունը Սուլթան Մահմադի կողմից չզննահատվելու փաստը ընդգծելու համար որոշակի կերպով հատուկ է հենց պոետին: Ինչ վե-

Tan-ābād dāram be dīgar sarāy.

Չենք ուզում մարդկանց տանջող (ավելի ճշգրիտ՝ մարդու արժեքը պակասեցնող, չգնահատող) այս աշխարհը,

Մարմինս պատրաստ է այլ աշխարհի համար:

33 33
روان مرا در مقام صفای
فرود ار در حضرت مصطفای

Ravān-e marā dar maqam-e safāy

Forūd ār dar hazrat-e Mostafāy

Մեր հոգիները մաքրագույն փուլում,

Իջեցրու Մարգարեի մեջ (ձուլիր Մարգարեին):

34 34
تن اسانم از عقدها بگذران
بایمان ز جسمم بداور رسان

Tanāsānam az ‘oqdhā⁶⁶ begozarān

Be īmān ze jesmam bedāvar resān.⁶⁷

Հոգիս կապանքներից անցկացրու,

Հավատիս շնորհիվ մարմնիցս (զատիր) Աստծուն հասցրու (?):

35 35
من و هر که از دوستدار منست
بمهر محمد دلش روشن است

Man o har ke az dūstdār-e manast

Be mehr-e Mohammad delāš rūšan ast.

Ես և մերձավորներս,

Մունամմադի սիրով սիրուներս ուրախ է:

36 36
الهی باعزای ال عبا
که ما را مجدد ببخشا عطا

Elahī be e ‘zāz-e al-e ‘abā

Ke mārā mojadad⁶⁸ bebaxšāy ‘atā⁶⁹.

Ով Աստված ի պատիվ Սրբագույնների,

Մեզ կրկին պարգևի արժանացրա:

րաբերում է բառի ծագումնաբանությունը, սպա միջին պարսկերենում այն վկայվել է vizāy- [wyz’d-] «վնասել, թուլացնել», vizāyišn «վնաս», տե՛ս D. N. Mackenzie, *A Concise Pahlavi Dictionary*, London, p. 93, նաև՝ wizend «վնաս», տե՛ս D. Durkin-Meistererns, *Dictionary of Manichaean texts, Texts from Iraq and Iran*, ed. by Francois de Blois and Nicholas Sims Williams, vol. 2, Belgium, 2004, p. 143. արբև. abēwizend «չվնասված, չպակասած» (նույնը, vol. 1: 17), wizendag «վնաս» (նույնը: 363) ձևերով:

⁶⁶ ‘oqde + -hā ձևն է, որի -e ն ձեռագրերում -hā հոգնակիակերտով հավելվելիս հիմնականում գրային արտացոլում չի ստանում:

⁶⁷ M: *Be īmān ze jesmam barāvar ravān* «Հավատով մարմնիցս հոգիս հանիր»:

⁶⁸ M: *be jannat* «գրախա»: Այս ձևն ավելի հարմար է:

⁶⁹ Š: *xatā* «սխալ»:

37 بفر دوس اعلا به زير لوا
بيخشای انجای ما را بقا

Be ferdows-e a 'lā be zīr-e lavā
Bebaxšāy ānjāy mārā baqā.
Սֆանչելի դրախտն (է ֆո) դրոշի ներֆո,
Մեզ այնտեղ հավերժությունն պարզելիր:

38 هزاران هزاران هزار آفرین
ز ما بر محمد و ال اجمعین

Hezārān hezārān hezār āfarīn
Ze mā bar Mohammad o Al-ajam īn.
Հազար ու հազար, հազար փառֆ,
Մեզնից Մուհամմադին ու Սուրբ ընտանիքին:

M 535 –ի 27, 35, 37 բեյթերում բերված Մոհամմադ մարգարեի անունը գրված է հաստ թանաքով:

Այսպիսով, Մատենադարանի Ղաչարական շրջանի Շահնամեի ձեռագրի (*N 535*) առաջաբանը հիմնականում նույնական է Բայսոնդուրյան առաջաբանին, սակայն Սուլթան Մահմուդին ուղղված երգիծանքի տեքստի միայն 5, 10-14, 22-25 բեյթերն են համընկնում այդ առաջաբանում վկայված հիմնական տեքստի հետ: Տեքստի 6, 7, 8-րդ բեյթերը իմաստով ու կազմով հիմնականում նույնն են էպոսի «Խոսրով և Շիրին» պատումի առաջին բեյթերի⁷⁰, իսկ 5, 12, 14, 15-րդ բեյթերը՝ էպոսի ավարտական հատվածում զետեղված բեյթերի հետ⁷¹: Մնացյալ դեպքերում այս երգիծանքի տեքստը նույնական է *XVII* դարից վկայված տեքստի տարբերակի հետ և, փաստորեն, ներկայանում է որպես նշված տեքստերից վերցված բեյթերի հավաքածու: Բեյթերի ընտրությունը գրիչը կատարել է բավական զգուշորեն՝ պահպանելով իշխանական դիրք ունե-

⁷⁰ Տե՛ս **Շահնամե**, Մոսկվայի հրատարակություն, 1998, հ. 9, էջ 1802: 3370; 3374; 3375, նաև՝ *M535* ձեռագրի էջ 370ա-ում կարդում ենք.

Bovad bist šeš bār bivar hezār

Soxanhāye šāyeste o ɣamgosār...

Nakard andar īn dāstānhā negāh

Ze badgūy (o) baxt-e bad āyad gonāh.

Jodā kard badgūy dar kār-e man

Tabah šod bar šāh bāzār-e man.

Թարգմ. –Ինի ֆսան վեց անգամ տաս հազար,

Արժանի ու ամոհոյ խոսերը...

Մի հայացք չգցեց այդ պատմություններին,

Չարախոսից (ու) վատ բախտից է գալիս մեղքը:

Բաժանեց չարախոսն իմ գործը,

Շահի համար իմ գործը դարձավ անարժեք /ոչնչացած/...

⁷¹ *Širānī*, նշվ. աշխ., էջ 156-157:

ցողների նկատմամբ հնազանդության ու հարգանքի մշակույթը, նաև՝ վերջում, փառաբանելով ու ողջունելով շիա սրբերին:

Асмик Киракосян

**Сатирический текст, адресованный Махмуду Газневи, в
рукописи “Шахнаме” (Арабографический фонд Матенадарана,
N 535)**

Начиная с XV века переписчики “Шахнаме” стали добавлять к поэме предисловия в прозе, включающие, как правило, данные о жизни Фирдоуси, события, отражающие отношения поэта с современниками, а также связанные с дворцовыми интригами, с историей создания «Шахнаме» и т. д. В этих предисловиях, помимо прочего, введен в оборот стихотворный текст сатирического послания Фирдоуси к Султану Махмуду Газневи, засвидетельствованный еще с XII века и фигурировавший в ряде вариантов в разных рукописях. Предметом анализа данной статьи является одна из версий сатиры на Султана Махмуда (38 бейтов), приведенная в предисловии к рукописи “Шахнаме”, хранящейся за N 535 в арабо-персидском рукописном фонде Матенадарана и отличающейся содержанием и своеобразными различиями.

Ключевые слова: Шахнаме, рукопись, предисловия, сатирическое послание.

Hasmik Kirakosyan

**A Satirical Text Addressed to Mahmud of Ghazna in a Manuscript
of “Shahnameh” (Matenadaran, N. 535 Arabic script manuscript
fund)**

Starting from the XV century, the “Shahnameh” scribes began adding prose prefaces to the poem, as a rule, describing details of the poet’s life, persecutions of Firdausi by envious scribblers, court intrigues, as well as the story of the creation of the “Shahnameh” and subsequent events. These prefaces also introduced a short satirical poem on Sultan Mahmud of Ghazna, known from the XII century and attested in several versions in different manuscripts.

The paper is devoted to the analysis of a unique version of the mentioned poetic piece (38 distichs) from the preface to one of the “Shahnameh” manuscripts of the Qajar period, kept in the Matenadaran (N. 535 Arabic Manuscripts Fund), and distinguished by its content, poetic devices and word usage.

Key words: Shahnameh, manuscript, preface, satirical poem.